
ՀԱՅԵՐՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

(Օսմանեան տիրապետութեան շրջանին)

ԱԶԷԶԵԱՆ Հ. Ա. (Միրիա, ք. Հալէպ)

Սուրիոյ տարածքին հայերու ներկայութիւնը սկսած է դարերու խորքէն եւ պարբերաբար վերանորոգուելով Հայաստանէն դէպի դուրս իրականացած յատկապէս զանգուածային արտագաղթերով, տեղւոյն հայ համայնքը յաջողած է գոյատեւել առ այսօր, կարեւոր տեղ գրաւելով հայութեան համայնական կեանքէն ներս, երբ պատմական Սուրիա տարածուած էր հիւսիսէն՝ Ամանոսի լեռներէն, դէպի հարաւ՝ Եգիպտոսի սահմանները (Մինայի Թերակղզին), արեւմուտքէն՝ Միջերկրական Ծովէն դէպի արեւելք՝ սուրիական անապատ, իսկ հիւսիս-արեւելքէն սահմանակից եղած էր Հայաստանի հետ: Հայկական բարձրաւանդակէն անցած էին Հին արեւելքի միջագոյն այն ճանապարհները, որոնք Սուրիոյ տարածքը կապած էին Սեւ եւ Կասպից Ծովերուն հետ:

Հայ եւ օտար աղբիւրներ միահամուռ կը հաստատեն թէ՛ հայոց Տիգրան Բ. թագաւորի Հայկական կայսրութեան սահմանները դէպի հարաւ հասած են մինչեւ Պաղեստին, եւ Անտիոք դարձած է Արքայից Արքային մայրաքաղաքներէն մէկը: Հուսկ, (Ն.Ք.) 64 թուականէն մինչեւ Դ. դար՝ Սուրիա մաս կազմած է Հռոմէական կայսրութեան, ապա մինչեւ Է. դար՝ Բիզանդական կայսրութեան, երբ 638-ին զայն գրաւած են արաբները: Սուրիա փառքի օրեր արձանագրած է Օսմանեան խալիֆայութեան շրջանին (661-750 թթ.), որուն մայրաքաղաքը եղած է Դամասկոս: Աւելի վերջ, Սուրիա Ապպասեան խալիֆայութեան (750-1285 թթ.) նահանգներէն մէկը ներկայացուցած է, իսկ ԺԱ. դարէն սկսեալ (կամ անոր կարգ մը մասերը)՝ ենթարկուած է թուրք-սելճուքներուն, Այյուպիներուն, մոնկոլթաթարներուն, մէմլուքներուն, օսմանցիներուն (1519-1918 թթ.) եւ ներառեալ Սուլթան Էմինի տիրապետութիւնը եւ Ֆրանսական Հոգատարութեան, մինչեւ անկախութիւն՝ 17 Ապրիլ, 1946:

Օսմանեան տիրապետութեան պարագային, արեւելեան նուաճողական քաղաքականութեան նախաձեռնողը հանդիսացած է սուլթան Սելիմ Ա. (1512-1520 թթ.): Ան շարունակելով իր յաղթանակները, Հալէպի հիւսիսակողմը՝ Մարձ Տապէքի դաշտավայրին մէջ՝ 1516ին վճռական պարտութեան մատնած է մէմլուքները, գրաւելով Հալէպը: Յաջորդ տարին, 1517 թուին, սուլթանը գրաւած է Սուրիան ու Եգիպտոսը, տիրելով Միջերկրական Ծովու ամբողջ արեւելեան ծովափներուն: Օսմանեան պետութիւնը դարձած է տարածաշրջանի իսլամ իշխող միա՛կ ոյժը:

Սուլթան Սելիմ Ա. Եգիպտոսէն վերադարձի ճամբուն վրայ, երկար ժա-մանակ կանգ առած է Սուրիոյ մէջ, երկրին տարաբնոյթ հարցերը դասաւորելու համար (վարչական, հարկային, եւ այլն): Մէմլուքներու հետեւողութեամբ պահուած են Հալէպի եւ Դամասկոսի «նիյապաները» (նահանգները), վերջինը ընդարձակուած է Երուսաղէմի, Սաֆատի եւ Կազայի կցումով: Բայց Դամասկոսի վալիին դաւաճանական մէկ արարքին

պատճառով, Սուրիա վերաբաժնուած է երեք վիլայէթներու (նահանգներու)՝ Սուրիոյ, Հալէպի եւ Թրիփոլիի վիլայէթներուն:

Սուրիոյ վիլայէթին կեդրոնը դարձած է Դամասկոս, որ ընդգրկած է տասն սանճաքներ, եւ որոնց գլխաւորները եղած են Պէյրութ, Սայտա, Երուսաղէմ, Նապլուս, Կազա եւ Փալմիր: Հալէպի վիլայէթին կեդրոնը դարձած է Հալէպը, ընդգրկած է ինը սանճաքներ՝ ներառեալ հիւսիսային Սուրիան, եւ Թրիփոլիի վիլայէթին կեդրոնը եղած է Թրիփոլին, ընդգրկած է հինգ սանճաքներ, որոնց շարքին Համա, Հոմա, Ճապլէ, Սալամիյէ: Ուրեմըն, Պաղեստին ընդգրկուած է Դամասկոսի վիլայէթին մէջ: Ապա, 1613ին իշխան Ֆախրուտտին Բ. Ալ Սաանի (1590-1635 թթ.) դէպի Իտալիա փախուստ տուած միջոցին, օսմանեան պետութիւնը յառաջացուցած է Սայտայի չորրորդ վիլայէթը, որ վերակազմակերպուած է 1660 թուականին: Այս միջոցառումով օսմանցիք նպատակադրած էին տկարացնել Դամասկոսի վալիին իշխանութիւնը, եւ միեւնոյն ատեն հսկողութիւնը զօրացնել Լեոնալիբանանի վրայ: Վարչական սոյն բաժանումը շարունակուած է մինչեւ 1864 թուական, երբ օսմանեան նոր օրէնքին հիմամբ՝ Սուրիա (կամ «Պիլատ Ուլ Շամ») բաժնուած է երկու վիլայէթներու՝ Սուրիոյ եւ Հալէպի վիլայէթներուն: Հոսկ, 1887ին, սուլթան Ապտիլ Համիտ Բ.ի օրօք (1876-1909 թթ.) կազմուած է նաեւ Պէյրութի վիլայէթը, եւ Տէր Զօրի ու Երուսաղէմի մութասարրըֆութիւնները: Լեոնալիբանանը վարչականօրէն կատարելապէս անկախ եղած է՝ մեծ տէրութիւններուն հսկողութեամբ¹:

Տարածքային առումով, Դամասկոս որ ընդգրկած էր երեք մութասարրըֆութիւններ եւ տաս գատաներ, անոնցմէ չորսը՝ Պէքաայի, Պաալպէքի, Ռաշայայի եւ Հասպաիայի գատաները 1918ին կցուած են Լիբանանի: Իւրաքանչիւր մութասարրըֆութիւն իր կարգին ընդգրկած է գատաներ, որոնց սահմանները հասած էին մինչեւ ներկայի Յորդանանն ու Պաղեստինի ներքին շրջանները: Հալէպ ընդգրկած էր հիւսիսային Սուրիոյ շրջանները, ամբողջ Ալէքսանտրէթի գատաները և Ալէքսանտրէթի եւ Անտիօքի գատաները և, ինչպէս նաեւ Մարաշի, Այնթապի, Քիլիսի շրջաններն ու այլ գիւղեր եւ աւաններ², «Որոնց բնակչութեան մեծամասնութիւնը հայեր եղած են, եւ տեղահանուած են պատերազմի օրերուն...»³: Պէյրութի գատաներուն շարքին էին Թրիփոլիի, Լաթաքիոյ, Աքքայի (Աքրայի), Նապլուսի գատաները՝ իրենց ենթակայ շրջաններով: Երուսաղէմի մութասարրըֆութիւնը ընդգրկած էր Երուսաղէմն ու շրջակայքը եւ կարգ մը գատաներ, Տէր Զօրի մութասարրըֆութիւնը ընդգրկած էր սուրիական Ճէզիրէի շրջանները⁴:

Օսմանեան տիրապետութիւնը որոշակի հետքեր չէր ձգած Սուրիոյ ոչ քաղաքական, եւ ոչ ցեղային բաղկացութեան վրայ, բացի մակերեսային փոփոխութիւններէ, որոնք տեղի ունեցած էին սուրիական անապատի

¹ عوض، عبد العزيز، الإدارة العثمانية في ولاية سورية (1281-1333 هـ / 1864 – 1914م)، ص 64-66. غنايم، زهير، لواء عكا في عهد التنظيمات العثمانية (1281-1337 هـ / 1864-1918م)، ص 41، 45.

² الحكيم، يوسف، سورية والعهد العثماني، ص 50-51.

³ الحكيم، يوسف، سورية والعهد العثماني، ص 50-51.

⁴ – سلطان، د. علي، تاريخ سورية الحديثة، ص 52: Յայն, էջ 52: Յանլիսալ մանրամասնութեանց համար, տե՛ս «تاريخ سورية الحديثة» (اواخر الحكم التركي، 1908-1918)، ص 9-11.

բնակչութեան մէջ: Թուրք պաշտօնատարներ իրենց պաշտօններուն բերումով ժամանած էին Սուրիա՝ առանց իւրացնելու հողը, ապա քանի մը հազար չերքէզներ 1877-1878ի ռուս-թրքական պատերազմի վաղորդայնին հաստատուած էին Սուրիոյ հիւսիսային շրջաններն ու Յորդանանի արեւելեան կողմը⁵, իսկ Առաջին Համաշխարհային Պատերազմէն ետք քանի մը հազար հայեր գաղթած էին Լիբանան (առանց նկատի առնելու Հայկական Ցեղասպանութեան օրերուն բռնագաղթի ենթարկուած հայութեան գաղթականական հոսանքները՝ համախմբուած յատկապէս Հալէպի մէջ): Երկրին լեզուն մնացած էր արաբերէնը, ուր ներմուծուած էին կարգ մը թրքերէն բառեր⁶: Պարզապէս, օսմանցիք որպէս իշխող վերնախաւ՝ փոխարինած էին մեմլուքները:

Տնտեսական առումով, Սուրիոյ տնտեսական կեանքը մնայուն տեղատուութեան մէջ եղած էր, ոչ միայն օսմանեան ապականած վարչութեան պատճառով, այլ նաեւ օսմանեան տիրապետութեամբ՝ միջազգային վաճառականութեան ճանապարհողիներուն մէջ յառաջացած փոփոխութեամբ: Տարածաշրջանի տնտեսական վերելքը յատկապէս առնչուած էր Հնդկաստան-Երոպա առեւտրական ճանապարհով, երբ 1497ին սոյն ուղեգիծի ծովային տարբերակին յայտնաբերումով, Ամերիկայի (1492 թ.) եւ Ֆիլիպինեան Կղզիներու (1520 թ.) յայտնագործումով՝ հիմնական տեղաշարժեր յառաջացած էին, միջազգային առեւտուրին եւ քաղաքակրթութեան կեդրոնը փոխադրելով դէպի արեւմուտք: Ուստի, փորթուկալցիներ իրենց նաւերը արեւելեան ծովերէն քաշած էին, նոյնիսկ 1503-1515 տարիներուն յաջողած էին իշխել Ինտոնէզիոյ եւ Պարսից (Արաբական) Ծոցի երկիրներու վաճառականութեան՝ շրջանցելով արաբական երկիրները: Անշքացած էր նաեւ նախապէս եռուն Միջերկրական Ծովը, մինչեւ Սուէզի Ջրանցքին իրագործումը՝ 1869ին⁷:

Վերոյիշեալ հանգամանքներէն մեկնելով, սուրիացի վաճառականներ իրենց գործունէութիւնը հիմնած էին ցամաքային առեւտուրին վրայ, որուն կարեւորագոյն արդիւնքներէն հանդիսացած էր Հալէպ քաղաքին նուաճած մեծ վերելքը, երբ նախ դարձած էր Պաղտատ-Պասրա ուղեգիծին սկիզբը եւ Ասիան՝ Եւրոպային կամրջող ճանապարհին վախճանը,

⁵ 1. Այս պարագային, չերքէզներ չէին վերաբնակեցուած Հալէպի մէջ, այլ այդտեղ հաստատուած էին վարչական թէ ոստիկանական պաշտօններ գրաւող անոնց ղեկավարները: Բայց քաղաքին շուկաները լեցնող չերքէզ մուրացկաններն ու դատարկապորտները՝ յաճախ միանալով զանազան հրոսակախումբերու, խանութները կը թալանէին եւ վայրագութիւններ կը գործէին, առանց դատանական ու ազգային խտրութեան:

2. Ինչպէս նաեւ քիւրտերու պարագային, քրտական բնակավայրեր գոյութիւն ունէին հայահոծ շրջաններու մէջ, եւ հայեր հարկ կը վճարէին անոնց աշխրաթապետներուն: Այս մասին բաւական խօսուն նշած է Ուլնեցի Տէր Դաւիթ Վարդապետ: Տե՛ս **Արշալոյս Արարատնան**, 27րդ Տարի, , Թիւ 808, 24 Յունիս 1867, Ուլնեցի Տէր Դաւիթ Վարդապետ, Ստորագրութիւն Այցելութեան:

حتى، د. فيليب، تاريخ سورية ولبنان وفلسطين، 317-316:2. نعيسة، د. يوسف جميل، مجتمع مدينة دمشق (1186-1256هـ / 1772-1884م) 1:201. عانوتي، د. أسامة، الحركة الأدبية في بلاد الشام خلال القرن الثامن عشر، ص 8.

վերածուելով Օսմանեան կայսրութեան տեղական վաճառականութեան մեծագոյն կեդրոնին:

Օսմանեան տիրապետութեան շրջանին Հալէպ քաղաքը իր աշխարհա-գրական դիրքին եւ պատմական զարգացման գոյգ գործօններով մանաւանդ, դարձած էր առեւտրական եռուն օճախ մը, երբ պատմականօրէն նոյնիսկ, Ն.Ք. երրորդ հազարամեակին արդէն ներկայացուցած էր շրջանային շուկայի կարելոր կեդրոն մը, եւ յիշուած էր հիթիթներու եւ Մարիի թագաւորութեան արձանագրութիւններուն մէջ՝ Հալապ եւ Խալլապա անուններով: Տարածաշրջանի ընդհանուր աշխարհագրութենէն մեկնած՝ այլ գործօն մը եւս շեշտած էր Հալէպի առեւտրական կարելորութիւնը, քաղաքը հաւասար հեռաւորութիւններու վրայ ինկած էր մէկ կողմէ Եփրատ Գետէն եւ միւս կողմէ՝ Միջերկրական Ծովէն, մեծապէս սատարելով առեւտրական շարժումին: Սոյն ճանապարհը ծանօթ էր առեւտրականներուն ու ճանապարհորդներուն, որպէս զուգահեռ անցք մը Ասիան՝ Եւրոպային կապող առասպելական Մետաքսի Ուղիին, հնագոյն ժամանակներէն մինչեւ օսմանցիներու ժամանումը: Եւ դեռ, քաղաքին արեւմտեան ու հարաւ-արեւմտեան շրջանները տարածուած պարտէզներն ու բարեբեր հողատարածքները, հիւսիսային, արեւելեան ու հարաւային կողմերէն անապատին մերձակայ դիրքը՝ զայն դարձուցած էին բաղձալի վայր մը ցամաքային եւ կարաւանային վաճառականութեան համար⁸:

Հետեւաբար, Հալէպ շուտով գերազանցած էր երբեմնի Անտիոքն ու Արաբական խալիֆայութեան մայրաքաղաք՝ Դամասկոսը, իսկ Ալեքսանտրէթի ու Թրիփոլիի նաւահանգիստները՝ Պէրթութէն խլած էին գլխաւոր նաւահանգիստի կարելոր դիրքը, որ հաստատուած էր մասնաւորաբար 1830ական թուականներուն, երբ Պէրթութ վերածուած էր յատկապէս եւրոպական առեւտրի հսկայ կեդրոնի մը, ուր համախմբուած էին նաեւ մեծ թիւով սուրիացի վաճառականներ, մանաւանդ 1850ական թուականներու Լիբանանի եւ 1860 թուականի Դամասկոսի դէպքերէն ետք⁹:

Մինչեւ ԺԷ. դարու կէսերը, Հալէպը հանդիսացած է ամբողջ Մերձատր Արեւելքի հիմնական շուկան, ուր կազմուած է վենետիկցի վաճառականներու համայնք մը: Վենետիկցիներ, ի մասնաւորի Հնդկաստանի համեմները իրենց հաշույն փոխադրած են Հալէպ եւ Դամասկոս: Սուրիոյ քաղաքներուն թէ՛ նաւահանգիստներուն մէջ, անոնց մրցակից նկատուած են ֆրանսացիները, որոնց Հալէպի հիւպատոսներէն մին 1683ին արտայայտուած է թէ՛ «Հալէպը համայն Օսմանեան Կայսրութեան ամէնէն գեղեցիկ ու ճոխ քաղաքն է՝ Իսթանպուլէն եւ Գահիրէն վերջ...»¹⁰: Նոյնպէս եւ անգլիացի վաճառականներ փութացած են Սուրիա: Ըստ հիւպատոսական տեղեկագիրներու, 1662 թուին Հալէպի մէջ գործած են 60 անգլիացի վաճառականներ¹¹:

⁸ إدم، إدهم و غوفمان، دانيال وماسترز، بروس، المدينة العثمانية بين الشرق والغرب (حلب – إزمير- اسطنبول)، ص ص 71-72.

⁹ شيلشر، ليندا، دمشق في القرنين الثامن عشر والتاسع عشر، ص 88.

¹⁰ حتي، د. فيليب، تاريخ سورية ولبنان وفلسطين، 318:2.

¹¹ Նոյն: 1. Օսմանեան Սուրիոյ տարածքին, եւրոպական համայնքներու ներկայութեան եւ գործունէութեանց մասին, յանդիման մանրամասնութեանց համար, տե՛ս

– الصباغ، د. ليلى، الجاليات الأوروبية في بلاد الشام في العهد العثماني (في القرنين السادس عشر والسابع عشر)، الجزء (1) و (2)،

– الصباغ، د. ليلى، الجاليات الأوروبية في بلاد الشام في العهد العثماني (في القرنين السادس عشر والسابع عشر)، الجزء

(1) و (2)، الطبعة الأولى، مؤسسة الرسالة، بيروت، 1904- 1989م.

2. Նաեւ, տե՛ս

– زيتون، د. عادل، العلاقات الاقتصادية بين الشرق والغرب في العصور الوسطى، دار دمشق، الطبعة الأولى، 1400هـ - 1980 م.

Աւելի ուշ, 1740ին սուլթան Մահմուտ Ա.ի (1730-1754 թթ.) ֆրանսացիներուն հետ ստորագրած համաձայնագրին հիմամբ՝ Սուրբ Երկիր այցելութիւնը արտօնուած է անոնց, եւ ֆրանսացիներու հոգատարութեան տակ գտնուող բոլոր քրիստոնէաներուն: Ֆրանսացիք համայնքներ ունեցած են նաեւ Ալեքսանտրէի, Լաթաքիոյ, Թրիփոլիի, Սայտայի, Աքքայի, Բամլէի մէջ, մինչ տեղական արտադրութիւններու կարեւորագոյններէն եղած են ձիթաիւղը (Սուրիա), մետաքսը (Լիբանան), բամպակը (Պաղեստին): Եւրոպական երկիրներու հետաքրքրութիւնը վերանորոգուած է 1776ին Ամերիկայի Միացեալ Նահանգներու անկախացումովը՝ Մեծն Բրիտանիայէն: Անգլիացիք Օսմանեան կայսրութեան տիրոջները՝ յատկապէս Սուրիան եւ Եգիպտոսը կը նկատէին իրենց կորուստներն ու վնասները հատուցող շրջաններ, իսկ ֆրանսացիներ իրենց ուշադրութիւնը վերակենդանացուցած էին Միջերկրական Ծովու աւազանի երկիրներուն վրայ՝ անգլիական Հնդկաստանը ձեռք ձգելու ճիգին մէջ, ուր Միջերկրական Ծովու արեւելեան եւ հարաւային օսմանեան տիրոջները լաւագոյն անցքը ներկայացուցած էին դէպի Հնդկաստան: Առ այդ, Նափոլէոն Գ.ի արշաւանքը 1798ին իրականացած է Եգիպտոսի եւ Սուրիոյ վրայ: Այս վերջինը բարդացուցած էր Սուրիոյ ներքին կացութիւնը՝ վերաբարձելով հակամարտութիւնները նոյնինքն աւատատէրերուն եւ յետոյ՝ Դամասկոսի եւ Սայտայի կառավարիչներուն (վալիներուն) միջեւ: Ապա, ԺԺ. դարու սկիզբը ֆրանսացիներուն հեռացումէն անմիջապէս ետք, օսմանեան պետութեան սպառնացած է Արաբական Թերակղզիէն ծնունդ առած Մուհամմէտ Իպն Ապտ Ալ Ուսահապի իսլամական շարժումը, որ կոչուած է «Ուսահապիներու Շարժում»: Անիկա արաբական հակազդեցութիւն մը նկատուած է, արաբական երկիրներու իշխանութեան դէկը վերադարձնելու համար նոյնինքն արաբներուն¹²: Շարժումին հետեւորդները իրենց սահմանափակ ոյժերով յարձակումներ գործած էին Իրաքի, Սուրիոյ, Եփրատ Գետի հովիտի կարգ մը շրջաններուն վրայ եւ 1803ին հասած էին մինչեւ Հալէպի շրջակայքը: Ճնշուած է միայն 1818 թուին¹³:

Քաղաքական-տնտեսական այդ պարունակին մէջ, Սուրիոյ հայկական գաղթօճախը ենթարկուած էր տեղաշարժերու եւ փոփոխութիւններու: Նախ, 1268 թուականին Անտիոքի անկումով, քաղաքը կորսնցուցած էր պատմական դարաւոր դիրքը եւ գաղթօճախին կեդրոնական տեղը գրաւած էր Հալէպը:

Արդարեւ, մեկուքներուն Անտիոքի գրաւումէն ետք, տեղւոյն հայութեան թիւը հետզհետէ նուազած է, միայն կղզիացած գաղութներ շարունակած են գոյատեւել Մուսա Լերան, Քեսապի, Լաթաքիոյ շրջանները եւ

¹² Յովհաննիսման Նիկողայ, նշում աշխ., 2:197-198:

– رافق، د. عبد الكريم، تاريخ مصر وبلاد الشام من الفتح الاسلامي إلى حملة نابليون (1798-1516م)، ص 311.

¹³

نعيسة، د. يوسف جميل، مجتمع مدينة دمشق (1186-1256هـ / 1772-1884م)، 1:26-30.

Եգիպտոսի Մուհամմէտ Ալիի կողմէ՝ «Ուսահապիներու Շարժում»ին ճնշման մանրամասնութիւններուն մասին, տե՛ս, – فريد بك المحامي، محمد، تاريخ الدولة العلية العثمانية، ص ص 406-410.

այլուրեք: Մենլուքեան տիրապետութեան շրջանէն մեզի ծանօթ է միայն ԺԵ. դարու պատկանող Յայսմաւորքի մը յիշատակարանը, որ գրուած է Անտիոքի շրջանէն Արամօ գիւղին մէջ¹⁴: Հուսկ, 1516ին սուլթան Սելիմ Ա. գրաւած է Անտիոքը, քաղաքը՝ աւելի անշքացած է, ասորի տարրը գրեթէ ամբողջութեամբ անհետացած է, յոյները՝ մանր համախմբումներով տարածուած են Որոնտէս Գետի հովիտին մէջ եւ հարաւի լեռներուն վրայ: Օսմանեան գրաւումէն քիչ ետք, յոյներու Պատրիարքը հեռացած է Անտիոքէն եւ Պատրիարքական Աթոռը հաստատուած է Դամասկոս: Նոյնպէս, հայկական գաղթերը պարպած են վաղեմի հայահոծ Անտիոքը, Լաթաքիան, Հարեմը, Համան ու Հոմսը, ի վերջոյ վերացած են Անտիոքի, Աֆամիայի եւ Լաթաքիոյ եպիսկոպոսութիւնները:

Վերոյիշեալ իրադրութեանց մէջ, վարչական յարափոփոխ բաժանումներու ենթարկուած է Անտիոքի ամբողջ շրջանը: Ռուճիի մէջ ձեւաւորուած է Շրդուրի գաւառը (Գատա), որուն կեդրոնը եղած է Շրդուր գիւղը: Աստիճանաբար, գաւառին գիւղերը այնքան նուազած են, որ 1596ին յիշուած են միայն երեք գիւղեր եւ երկու ագարակներ: Մինչ ԺԶ. դարու երկրորդ կիսուն, Անտիոքի նախկին Դքսութեան սահմաններէն ներս ձեւաւորուած են շարք մը ինքնավար «աղայութիւններ», որոնք ժառանգական դրութեամբ դարերով տիրած են իրենց տիրոջներուն՝ առանց հաշուետու ըլլալու Հալէպի փաշային: Ուրեմն, ԺԵ. դարու երկրորդ կիսուն ձեւաւորուած Ճսրը Շրդուրը՝ Ռուճիի եւ Անտիոքի հարաւային շրջաններուն համար մեծ կարեւորութիւն ներկայացուցած է, միաժամանակ բովանդակ շրջանին համար իբրեւ գլխաւոր շուկայ (պագար): Նշելի է թէ՝ Ճսրը Շրդուրի եւ շրջակայքին մէջ գործած են կարելոր երեք մաքսատուներ: Անոնցմէ վերջինին մօտէն անցած են արեւմուտքէն եկող կարաւանները: Խորքին մէջ անիկա ներկայացուցած է Հալէպ-Թրիփոլի սահմանագլուխը, սահմանին միւս կողմը ինկած է Քիւրտ Տաղիի շրջանը, ուր առկայ եղած են հայկական գիւղեր, անոնց մնացորդացը կը նկատուին Արամօ, Ղնեմիէ գիւղերը, իսկ մաքսատան մօտ՝ հանդիպակաց կողմէն, մինչեւ ԺԹ. դարու վերջերը գոյութիւն ունեցած են շարք մը հայաբնակ գիւղեր՝ Գոմդայան, Մեշթէն, Պսապըթ եւ ուրիշներ¹⁵:

Աւելի ուշ, ԺԵ.-ԺԸ. դարերուն, Անտիոք գրեթէ պարպուած է քրիստոնէայ տարրէն: Տեղացի հայերն ու յոյները կամ ջարդուած են եւ կամ մեծ մասամբ քաղաքը ձգած են, փաստօրէն մինչեւ ԺԵ. դար նոր քրիստոնէաներ չեն հաստատուած Անտիոք¹⁶: Միայն ԺԸ.-ԺԹ. դարերուն վերկազմուած է փոքրաթիւ հայ համայնք մը, գլխաւորաբար Սուէտիայէն, Քեսապէն, Այնթապէն, Քիլիսէն եւ այլ վայրերէ տեղափոխուած հայերէն: Այլ խօսքով, ԺԹ. դարուն Անտիոքի մէջ կազմաւորուած հայ գաղութը՝ կապ չունի միջնադարու հոծ ու բարեկարգ հայ գաղութին հետ: Իսկ ԺԹ. դարու գրեթէ կէսերուն Ամերիկեան Պօրտ Քարոզչական Ընկերութիւնը եւ Կաթոլիկ Անտոնեան Միաբանութեան հայրերը

իրենց

կեդրոնը

¹⁴ **Խաչիկեան Լեւոն**, ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ, 2:252:

¹⁵ **Չոլաքեան Յակոբ**, Անտիոքի Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը, էջ 78-80:

¹⁶ **Սիրումեան**, Արտաւագդ Արք., Պատմութիւն Հալէպի Հայոց (1355-1908), Ա. հա-տոր, Սուրիա, էջ 1007:

դարձուցած են Անտիոքը, եւ այդտեղէն իրենց գործունէութիւնները ծաւալած են տարածաշրջանէն ներս: Եւ ուրեմն, 1864-1867 տարիներուն վերականգնած է Անտիոքի պատմական թեմը՝ Անտիոքի, Սուէտիոյ, Քեսապի եւ Պէլլանի իր շրջաններով: Այդ օրերուն, Անտիոքի Հայ Առաք. Համայնքը հաշուած է «120 տուն»¹⁷:

Յիշարժան է թէ՛ ԺԹ. դարու սկիզբը՝ 1833ին, Եգիպտոսի կառավարիչ Մուհամմէտ Ալի երբ գրաւած է Անտիոքը, բանակին մէկ մասին ցամաքահանումը կատարուած է Սուէտիոյ մօտ (Մուսա Լէո): Ան հայերուն ու ալեւիներուն օգնութեամբ ուղղուած է դէպի Անտիոք եւ Ալեքսանտրէթ, ուրկէ նաւակներով վերադարձած են եւ միացած են զօրքերուն: Հայերն ու ալեւիները ոգեւորութեամբ դիմաւորած են Մուհամմէտ Ալիի վարչութիւնը, որ իր կարգին յատուկ առանձնաշնորհումներ շնորհած է հայերուն: Շուրջ տաս տարիներ ետք, 1840ին, երբ Մուհամմէտ Ալի պարտաւորուած քաշուած է Սուրիայէն՝ օսմանեան վերահաստատուած վարչութիւնը շատ խիստ վարուած է հայերուն եւ յոյներուն հետ¹⁸:

Ի. դարու սկիզբը, ըստ Լաթաքիոյ, Անտիոքի եւ Ճսրի Առաջնորդ՝ Մովսէս Վրդ. Ոսկերիչեանի կողմէ կատարուած՝ 30 Սեպտեմբեր 1911 թուակիր մարդահամարին, Անտիոքի հայ գաղութը հաշուած է՝ «41 տուն, 206 անձ»¹⁹, որոնց մեծամասնութիւնը Անտիոքէն հեռացած են 1939ին Ալեքսանտրէթի սանճաքին Թուրքիոյ կցումով:

Միւս կողմէ, նկատի առնելով հանդերձ թէ՛ սուրիական ծովեզերքի տարածքին մի՛շտ հայկական տարրի մը ներկայութիւնը արձանագրուած էր, եւ որպէս կրօնական, մշակութային ու վաճառականական ուշագրաւ կեդրոն մը՝ դէպի Անտիոք հայկական գաղթեր իրականացած էին, սակայն կը կարծուի թէ՛ պատմականօրէն հայկական առաջին գաղթը դէպի Սուրիոյ ծովեզերեայ շրջանները՝ պատահած էր ԺԱ. դարուն, թուրք-սելճուքներուն կողմէ Հայաստանի վրայ կատարած արշաւանքներուն պատճառով: Հայեր տարածուած էին Լաթաքիոյ մէջ եւ շրջակայքը²⁰, եւ 1188ին, երբ Այյուպիներ գրաւած էին Լաթաքիան, այդտեղ գտած էին հայկական կոկիկ համայնք մը:

¹⁷ **Չուպքեան Յակոբ**, նշվ. աշխ., էջ 83:

¹⁸ **Գուշագճեան Մարտիրոս**, Մուսա Լեւոյան Հայկական Գաղթօճախը (1875-1930), էջ 33-34:

¹⁹ Հայաստանի Ազգային Արխիւ, Փոնտ թիւ 1421, ցուցակ թիւ 1, գործ թիւ 98, **Ոսկերիչեան Մովսէս Վարդ.**, Լատիկէի եւ Անտիոքի եւ Ճսրիի Հայ Գիւղերու Ժողովրդ-դնան ընդհ. ցանկը, էջ 288:

1. Նշելի է թէ՛ 288 էջերէ բաղկացած մարդահամարի տոմարին խորագիրն է՝ Լազքընէի եւ Ճիսիի Առաջնորդարանի Վիճակաց Հայ Գիւղերու ընդհ. ցուցակը:

2. Սոյն տոմարին լուսապատճենը կը գտնուի Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ թաղականութեան մօտ: Նաեւ տնւ **Տունկեան Գրիգոր**, Նիւթեր Լաթաքիոյ եւ Շրջակայքի Հայ Ազգաբնակչութեան Պատմութեան, Հալէպ, 1983:

²⁰ **Աբրահամեան Աշոտ Գ.**, Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի Պատմութեան, 1:428: Թէն Ժ. դարուն, 973-992 տարիներուն եւ Ֆաթիմեաններու օրօք, հայկական զանգուածային երկրորդ գաղթ մը իրականացած է դէպի Սուրիա եւ գաղթական հայեր առաւելաբար հաստատուած են երկրին արեւմտեան շրջանները: **Օրմանեան Մաղաքիա Արք.**, Ազգապատում, 1:1137-1138:

Ինչպէս նաեւ, ԺԲ-ԺԳ. դարերուն, խաչակիրներու օրօք, հայկական մնայուն գաղութներ կազմուած էին Լաթաքիոյ, Հոմսի, Թրիփոլիի, Աքքայի մէջ: Հայոց Գրիգոր Դ. Տղայ Կաթողիկոսի կողմէ (1173-1193 թթ.) կազմակերպուած Հռոմկլայի Ժողովին (1179 թ.), մասնակցած էր նաեւ Լաւոդիկէի (Լաթաքիոյ) Սարգիս եպիսկոպոսը²¹, իբրեւ յարացոյց տեղւոյն հայութեան կենսունակութեան, մանաւանդ որ խաչակիրներ իրենց զինուորական գործունէութիւնները ծաւալած էին Այաս-Լաթաքիա-Թրիփոլի գիծին վրայ, վայելելով հայութեան օժանդակութիւնը, այնպէս ինչպէս Կիլիկիոյ մէջ: Իսկ երբ խաչակիրներ վերջնականապէս հեռացած էին սուրիական ծովեզերքէն, եւ Եգիպտոսի մէմլուքները գրաւած էին անոնց բերդերն ու ամրոցները, հայեր մասամբ ցրուած էին եւ կամ խառնուած էին տեղացի ժողովուրդին հետ: Հաւանաբար, նոյնը պատահած էր Լաթաքիոյ պարագային, երբ 1250ին քաղաքը գրաւած էին մէմլուքները, բայց մինչ այդ 1157, 1170 եւ 1188 թուականներու աղիտալի երկրաշարժները²² խիստ ժխտական անդրադարձ ձգած էին հայ համայնքի պարագային, թէեւ Լաթաքիոյ նաւահանգիստը միշտ նկարագրուած էր որպէս՝ գեղեցիկ ու փառաւոր:

ԺԴ. դարուն եւ դէպի Պաղեստին զարգացած ուխտագնացութիւններուն հետեւանքով, յատկապէս Կիլիկիոյ Հայոց Թագաւորութեան անկումէն ետք (1375 թ.), Լաթաքիոյ հայութիւնը զգալի աճ արձանագրած էր, այսուհանդերձ համայնքը փայլուն վիճակ մը չէ պարգած՝ մինչեւ օս-մանեան տիրապետութիւն, երբ ԺԵ. դարուն հայկական գաղթերը դէպի Լաթաքիա աշխուժացած են: Հետեւաբար, ԺԸ. դարու երկրորդ կիսուն, բաւարարելու համար հայ ուխտաւորներուն կարիքները, Յակոբ Ամուճայ Հալէպցիի ծախքերով 1755ին շինուած է երուսաղիմապատկան Լաթաքիոյ Հոգետունը²³:

²¹ Նոյն, 1:1467-1468:

1. Այս Ժողովին մասին յստակ տեղեկութիւններ չեն հասած մեզի: Կ'ենթադրուի թէ՛ նրկարատնւ եղած է: Նոյն, 1:1469:

2. Խաչակիրներու կողմէ Լաթաքիա ինկած էր՝ 1103ին, Աֆամիա՝ 1106ին, որոնք միացուած էին Անտիոքի Դքսութեան: 232:2. تاريخ سورية ولبنان وفلسطين، د. فيليب، حتي، د. فيصل، تاريخ سوريا ولبنان وفلسطين، ص 65.

²² بيطار، عيد الياس، اللانقية عبر الزمن (من عصور ما قبل التاريخ إلى عام 1963)، الجزء الأول (تاريخ اللانقية)، ص 65.

²³ **Տէր Յովհաննէսնանց**, Աստուածատուր Եպս., Ժամանակագրական Պատմութիւն Ա. Երուսաղէմի, 2:152: Աղանունի, Մկրտիչ Եպիսկոպոս, Միաբանք եւ Այցելութ Հայ Երուսաղէմի, էջ 315: «Սուրիահայ Տարեցոյց», Բ. Տարի, 1925, [անստորագիր], «Լաթաքիոյ Հայ Գաղութը», էջ 1218: «Սուրիահայ Տարեցիկը», Ա. Տարի, 1929, **Չպորճն-ան Պ.**, «Ալաուիթ Պետութիւնը, Վարչաձեւը, Սահմանները, Ազգաբնակչութիւնը – Հայերը Ալաուիթ Պետութեան Սահմաններուն Մէջ», էջ 134-135:

1. Լաթաքիոյ Հոգետունը (Քէտուն), կառուցուած է Երուսաղէմի Թէոդորոս Ա. Խորենացի Պատրիարքի օրօք (1752-1755թթ.): Տես **Աղանունի Մկրտիչ Եպիսկոպոս**, նշուած աշխ., էջ 152-153:

2. Հոգետունը եղած է նրկարկանի կառոյց մը, 25 սենեակներէ բաղկացած եւ յա-րակից պարտէզովը: «Սուրիահայ Տարեցոյց», Բ. Տարի, 1925, [անստորագիր], «Լաթաքիոյ Հայ Գաղութը», էջ 216:

3. Ըստ Պ. Չպորճնանի, բացի այդ «21» սենեակներէն, վանքը սեփականատէր եղած է նաեւ 21 խանութներու, 1 փուռի եւ 2 սենեակնոց տունի մը, որոնց հասոյթը՝ 160 օսմ. ոսկի տարեկան, տրուած է Պատրիարքարանին: «Սուրիահայ Տարեցիկը», Ա. Տարի, 1929, Չպորճնան, Պ., «Ալաուիթ Պետութիւնը, Վարչաձեւը, Սահմանները, Ազգաբնակչութիւնը ...», էջ 136:

Հոգեւորական կողքին, նոյն տարին հիմնուած է Ս. Աստուածածին եկեղեցին²⁴։ Սակայն, նախապէս Լաթաքիոյ մէջ եպիսկոպոսական Աթոռի մը գոյութիւնը, մտածել կու տայ թէ՛ եկեղեցին որպէս փոքր մատուռ մը հաւանաբար կառուցուած էր աւելի առաջ, եւ ըստ արաբական տուեալներու՝ 1254 թուին²⁵։

Լաթաքիոյ հայ համայնքը իր գոյութիւնը պահած է, եւ ԺԹ. դարու սկիզբները թուրքերու կողմէ գործադրուած բռնութիւնները՝ պատճառ դարձած են հայերու ցրումին։ Այս մասին պերճախօս վկայած է Աստուածատուր Եպս. Տէր Յովհաննէսեանց²⁶։ Վերոյիշեալ բռնարարքները պատահած են 21 Յուլիս 1826ին։ Բաւական վերջ, Լաթաքիոյ հոգեւոր տեսուչ կարգուած է Զաքարիա Վրդ. Զմիւռնիացի (1864-1874 թթ.), որուն ձեռագիր մէկ յիշատակարանը բաւական ծանօթութիւններ տուած է²⁷։ Ան նաեւ շրջագայած է Լաթաքիոյ հայաբնակ գիւղերը՝ Արամօ, Համպուշ (Հապպուշ), Քեսապ, Էօքիւզ Օլուզ, Պաղճաղազ, Քէօրքիւնէ, Չագալճըզ, Չընարճըզ, Տիւզաղաճ, Էսկիւրէն, Քայաճըզ, եւ հետաքրքիր

²⁴ «Գեղարդ», Գ. Գիրք, 1985, Գարտաշեան, Արտաշէս Հ., «Նիւթեր Սուրիոյ Հայ Գաղութին Պատմութեան Համար», էջ 267։ Յիշուած է թէ՛ Հոգեւորական մօտ յետոյ շինուած է մատուռ մը պոլսեցի բարերարի մը կողմէ, որուն հիմնարկութեան թուականն անձանօթ է։ «Սուրիահայ Տարեցոյց», Բ. Տարի, 1925, [անստորագիր], «Լաթաքիոյ Հայ Գաղութը», էջ 216։

²⁵ بيطار، غيد الياس، اللانقية عبر الزمن (من عصور ما قبل التاريخ إلى عام 1963)، الجزء الأول (تاريخ اللانقية)، ص 188. Կը կարծենք թէ՛ թուականութեան սխալ մը կրնայ եղած ըլլալ, արդեօք՝ 1264+501=1755։

²⁶ **Տէր Յովհաննէսեանց, Աստուածատուր Եպս.**, նշուած աշխ., 2:408-409։ Աստուածատուր Վարդապետ 1868ին այցելած է Սուրիոյ գրեթէ բոլոր հայաշատ կեդրոնները եւ փոխանցած է կարեւոր տեղեկութիւններ, տե՛ս «Սիօն», Գ. Տարի, թիւ 8, 31 Օգոստոս 1868, Տէր Յովհաննէսեանց, Աստուածատուր Վրդ., «Կարճ Ճանապարհորդութիւն ՅԱսորիս», էջ 172-176, թիւ 9, 30 Սեպտեմբեր, 1868, էջ 211-214, թիւ 10, 21 Հոկտեմբեր, 1868, էջ 229-234։

²⁷ 1. **Զաքարիա Վրդ.** Զմիւռնիացի պաշտօնավարած է տաս տարիներ (1864- 1874 թթ.)։ Անոր մէկ ձեռագիր յիշատակարանը Լաթաքիոյ հայ համայնքին մասին բաւական ծանօթութիւններ տուած է (8 Փետրուար, 1864) (նկատի առնելով թէ՛ այս թուականէն առաջ պաշտօնավարած տնտեսներուն մասին որեւէ արձանագրութիւն գոյութիւն չունի), «Ի Փրկչեան թուականին 1864, 8 Փետրուարի, ի Լատոքիկէ քաղաքի Լուսաւորչական Հայ Ժողովրդաց տոմար կազմեալ, զհորաքանչիւր ընտանեաց եւ պա-րագայից զանուանս ի դիրքիս զիտելոյ, ինձ եւ այլոց գրեցի աստ»։ Կան եւս ի սմա անուանք պանդխտոյ որ ի բուն քաղաքաց անուամբն որոշեցին իմանին, թէպէտ ամենայն ազգայինք մեր այլ եւ այլ քաղաքաց եկեալ են յառաջ քան 150-160, ամս...»։ Տե՛ս «Սուրիահայ Տարեցոյց», Բ. Տարի, 1925, [անստորագիր], «Լաթաքիոյ Հայ Գաղութը», էջ 216-217։ «Տաթնի» Տարեցոյց, Գ. Տարի, 1927, **Գապալնճեան Գ.**, «Սուրիա», էջ 232-234։

2. Զաքարիա Վարդապետ Երուսաղէմի Հայոց Միաբանութենէն պէտք է որ ըլլար, բայց անոր մասին Մկրտիչ Եպս. Աղանունի չէ անդրադարձած վերոյիշեալ հատորին մէջ։

տեղեկութիւններ փոխանցած է տեղւոյն հայութեան մասին²⁸: Զաքարիա Վարդապետի օրօք, 1866ին տեղւոյն համայնքը հաշուած է 100 հայեր²⁹:

Ապա, անոր յաջորդած է Թադէոս Վրդ. Աստուածատուրեան-Եկաւեան, պաշտօնավարած է 32 տարիներ (1874-1905 թթ.), եւ ձգած է արձանագրութիւն մը, ուր խօսած է Հոգեւորական մասին: Անոր օրօք, 1895ին, Լաթաքիոյ հայ համայնքը հաշուած է շուրջ 1600 հայեր³⁰: Թադէոս Վարդապետի յաջորդած են Գրիգոր Վրդ. Յովհաննէսեան (1905-1906 թթ.) եւ Վահան Վրդ. Քէշիշեան (1907-1909 թթ.), որոնք ոչ մէկ արձանագրութիւն ձգած են³¹:

1909ին սկսած է պաշտօնավարել Մովսէս Վրդ. Ոսկերիչեան, որ 1911ին կատարած է Լաթաքիոյ եւ շրջանի հայութեան մարդահամարը: Մեծ Եղեռնի օրերուն տարագրուած է, յետոյ դարձեալ վերադարձած է Լաթաքիա, ուր վախճանած է 1920ին: Վերոյիշեալ մարդահամարին համաձայն, Ի. դարու սկիզբը՝ 1911ին, Լաթաքիա հաշուած է «30 տուն, 200 անձ» հայ³²:

Յիշարժան է թէ՛ 1909 թուականի երիտթրքական շրջանի Սուրիոյ հայկական կոտորածներու ընթացքին, Քեսապի հայ համայնքէն փրկուած շուրջ 6000-6500 հայեր, որոնք ֆրանսացիներուն կողմէ փոխադրուած էին Լաթաքիա, վայելած են Մովսէս Վրդ. Ոսկերիչեանի հոգատարութիւնը³³:

Լաթաքիա եւ անոր հիւսիս-արեւելքը գտնուող Արամօ, Ղնեմիէ եւ այլ գիւղեր, Անտիոքի լատին Դքսութեան շրջանին ինկած էին Լաթաքիոյ հայ եպիսկոպոսութեան հոգեւոր իշխանութեան տակ: Յատկապէս Արամոյի եւ Ղնեմիէի իրարու մօտիկ գիւղերու շրջակայքը՝ ալէուի եւ քրիստոնէայ արաբախօս գիւղերու շարքին, գոյութիւն ունեցած են հայաբնակ գիւղեր եւս, ինչպէս՝ Օպին, Հապպուշ, Գասապ, Տէյր Թումա, դէպի հիւսիս՝ Նահիր Ուլ Քապիրի (Հիւսիսային Մեծ Գետ) հովիտն ի վեր եւ Թորոսի Լեռ

²⁸ «Սիօն», Ա. Տարի, թիւ 7, 1 Յուլիս 1866, [անստորագիր], «Լադաքիոյ Հայաբնակ Գիւղօրէից Ստորագրութիւնը եւ Գիւղացւոց Արդի Վիճակը», էջ 97-102. թիւ 10, 1 Հոկտեմբեր 186, [անստորագիր], «Թղթակցութիւն Լադաքիոյ», էջ 150-154:

²⁹ Տունկեան Գրիգոր, նշուած աշխ., էջ 18:

³⁰ Cuine Vital, *Syrie, Liban et Palestine*, p. 82.

³¹ «Սուրիահայ Տարեցոյց», Բ. Տարի, 1925, [անստորագիր], «Լաթաքիոյ Հայ Գաղութիւն», էջ 217-218; «Գեղարդ», Գ. Գիրք, 1985, Գարտաշեան, Արտաշէս Հ., «Նիւթեր Սուրիոյ Հայ Գաղութին Պատմութեան Համար», էջ 270: Յիշարժան է թէ՛ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան թիւ 144, 9 Փետրուար 1910 թուականի նամակին մէջ, ուղարկուած՝ Մովսէս Վրդ. Ոսկերիչեանի, զինք որակած են իբրեւ «Ժրաջան Կաթողիկոսական Փոխանորդ Լատիկիէի եւ Ճրար-Շուրիւրի Վիճակագր»: Տե՛ս Հ ԱԱ, ֆոնտ թիւ 1421, ցուցակ թիւ 1, գործ թիւ 4:

³² Հ ԱԱ, ֆոնտ թիւ 1421, ցուցակ թիւ 1, գործ թիւ 98, Ոսկերիչեան Մովսէս Վարդ., Լատիկիէի եւ Անտիոքի եւ Ճրարի..., էջ 288, Տոմար՝ էջ 3-7:

³³ Տե՛ս 1. Թերզեան Յակոբ Յ., Կիլիկիոյ Աղետը, էջ 256-257, 312: Չոլսքեան Յակոբ, Քեսապ, 1:91-95: Արեւնալ Ա. Ս., Քեսապ եւ Իր Գիւղերը, էջ 73: Brnzol Georges, *Les Turcs ont Passé In. La Virrité su Les Massacres d'Adana de 1909*, p. 246-265.

2. Ընդհանրապէս 1909ի Սուրիոյ հայկական կոտորածներուն մասին, տե՛ս *Revue D'Histoire Arménienne Contemporanée*, Tome III, Numero Spécial, Kevorkian, Reymond H., *La Cilicie (1909-1929), Des Massacres D'Adana Au Mandat Français*, p. 59-119.

— الحکیم، یوسف، سورية والعهد العثماني، ص 178.

կոչուած շրջանը: Ներկայիս ամբողջութեամբ թուրքմէն գիւղեր են, Քիւրտ Տաղի հայկական գիւղերը խամբած են ԺԹ. դարուն³⁴:

Արդ, Արամօ գիւղը ազգային եւ հոգեւոր կեդրոն մը հանդիսացած է նոյնիսկ շրջակայքի հայ բնակավայրերուն համար: Գիւղին մէջ առ այսօր գործող Ս. Ստեփանոս եկեղեցին՝ հաւանաբար ԺԳ. դարու կառոյց եղած է եւ քանիցս վերանորոգուած է, մինչ գիւղի բարձունքին վրայ գտնուող Ս. Գեորգ եւ Աստուածածին եկեղեցիները՝ կը կարծուի թէ՛ վանական համալիրի մը մնացորդացն են: Ուշագրաւ է ԺԵ. դարուն Արամոյի մէջ գրուած Յայսմաւուրքին յիշատակարանը³⁵:

Այս գիւղին մօտիկը ինկած է Տէր Թումա (Թովմասի վանք) ուխտավայրը, որ ունի հայերէն արձանագրութիւն մը, դէպի հիւսիս՝ Հապատշ գիւղի մօտ գոյութիւն ունեցած է աշտարակ մը՝ կառուցուած 1348 թուին, Կիլիկիոյ Մխիթար Գոներցի Կաթողիկոսի (1341-1355 թթ.) հրամանով: Իսկ Զաքարիա Վրդ. Զմիռնիացի այդտեղէն քաղած է սոյն արձանագրութիւնը. «*Կանգնեցաւ Աշտարակս Հրամանաւ Կթ[...]* Ս (կաթողիկոս) *Տէր Մխիթարաց, Իշ[...]* Զմեզ[...] Ծնաւոյ Մեր Զաշխատողս եւ Վաստակաւորքս Գործ[...] Զեզ եւ Մեզ. 27է [1348]»³⁶:

Արամօ (կամ Արամօն) եւ Ղնեմիէ իրարու մօտիկ գիւղերը՝ Նեպինիւս կամ Տերիւս լերան վրայ, ԺԶ. դարէն սկսեալ հայաթափած են:

Ըստ գրոյցներու, Արամօ գիւղի եւ մերձակայ հայաբնակ գիւղերուն բնակչութիւնը աստիճանաբար հեռացած է մինչեւ ԺԸ. դար, երբ այլազգի կալուածատէրեր իւրացուցած են անոնց կալուածները եւ բնութիւններ կիրարկած են: Արդարեւ, ԺԹ. դարու երկրորդ կիսուն, 14 Օգոստոս 1864ին, Զաքարիա Վարդապետ այցելած է Արամօ եւ լաւապէս ներկայացուցած է տիրող թշուառութիւնը³⁷: Ուստի շատեր զաղթած են, առ այսօր գոյատեւող Արամօ եւ Ղնեմիէ փոքր գիւղերը՝ 1911 թուականի մարդահամարին տուեալներով, յաջորդաբար ունեցած են «62 տուն, 353 անձ եւ 72 տուն, 392 անձ»³⁸: Սակայն, Մեծ Եղեռնին Արամոյի հայ ազգաբնակչութեան մեծամասնութիւնը նահատակուած է, նոյնպէս Ղնեմիէի հայութեան պարագային: Արխիւային տուեալներով, 30 Յունուար 1921ին, երկու գիւղերուն հայ ազգաբնակչութեան թիւը հաշուած է՝ 38 տուն, 141

³⁴ **Չուպքեան Յակոբ**, նշուած աշխ., էջ 87:

³⁵ «Գրեցաւ ի յաշխարհս Ծամիա, ի նրկիրս Սալունեաց, ի վանս Սուրբ Աստուածածնի, ընդ հովանեաւ սուրբ Գեորգայ դէմ յանդիման գտնուող գնդջն յԱրամու, թվ. Հայոց ԶԺԵ [1466]: Թումա եպսկ. Սիմէոն քահանայ Մանգեմանց եկեղեցւոյ»: **Խաչիկեան Լեւոն**, նշուած աշխ., 2:252:

³⁶ «Սիօն», Ա. Տարի, թիւ 7, 1 Յուլիս, 1866, [անստորագիր], «Լադաքիոյ Հայա-բնակ Գիւղօրէից Ստորագրութիւնը եւ Գիւղացւոց Արդի Վիճակը», էջ 100:

³⁷ Նոյն:

³⁸ Հ ԱԱ, ֆոնտ թիւ 1421, ցուցակ թիւ 1, գործ թիւ 98, **Ոսկերիչեան Մովսէս Վարդ.**, Լաւողիկէի եւ Անտիոքի եւ Ճըսիքի..., էջ 288, Տոմար՝ էջ 159-165, 166-175:

1. Յիշատակարանի մը համաձայն, Ղընէմիէի Ս. Գեորգ եկեղեցին շինուած է 1875ին, Թադէոս Վրդ. Աստուածատուրեան-Եկաւեանի ջանքերով: **Տէմիրճեան Վարդան Եպիսկ.**, Գաւազանագիրք, 1:386:

2. Արամոյի, Ղընէմիէի, Գարատուրանի, Էսկիւրէնի... մասին, տե՛ս նոյն, 1:368-391, եւ «Հասկ» Ամսագրի 1957-1960, 1979ի թիւերը:

անձ³⁹: Ապա, 1947ին Արամոյի եւ Ղնեմիէի հայութեան մեծ մասը ներգաղթած է Հայաստան:

Եագուպիէ եւ Գնիէ (Ղնիէ, Ղնեա, Գնէի, Քնայի, Խնեայ) իրարու կից գիւղերուն մէջ, հայեր բնակութիւն հաստատած են տեղափոխուելով շրջակայ գիւղերէն: Ռուճի հովիտին մէջ եւ հարաւի լեռներուն վրայ նախկին հայկական գիւղերու աւերակներէն ու գիւղերէն կարելի եղած է հետեւցնել թէ՛ անոնք շուրջ 150 տարիներ առաջ հայաբնակ եղած են, երբ երկուքն ալ կը գտնուէին միջնադարուն հայահոծ դարձած միջին Որոնդէսի ափին, հարաւէն հիւսիս՝ Շէյքրի, Մատիգի, Քաշֆահանի, Արգաքանի, Քաֆր Թըպպիւնի, Շըղուրի, Բագասի, Պալմիսի, Գուսէրի եւ Տէրքուշի բերդերուն վարչական տարածութիւններուն մէջ: Երկու գիւղերը եւ շրջակայքի բազմաթիւ կանգուն ու լքուած բնակավայրերը, բացի Քաֆր Թըպպիւնէն, թէեւ պատմական յիշատակութիւններ չեն ունեցած, բայց շատ հաւանաբար հայաբնակ եղած են, նկատի առնելով տեղւոյն արաբներուն բազմաթիւ վկայութիւնները՝ այս շրջաններու բնակիչներուն եւ մշակներուն հայ ըլլալուն մասին: Միայն Եագուպիէ եւ Գնիէ իրենց հայեցի գոյութիւնը պահած են:

Եագուպիէ եւ Գնիէ կիլիկական Ճարր Շըղուրէն դէպի հիւսիս, անոնց շրջակայքին մէջ կը գտնուին բազմաթիւ հնութիւններ, երբ Անտիոքէն եկած հռոմէական ճանապարհը անցած էր Տէրքուշէն, մտած էր Գուսէր եւ յետոյ Գնիէ գիւղին մօտէն անցնելով հասած էր Ճարր Շըղուր: ԺԹ. դարու վերջաւորութեան, 1899ին, Եագուպիէ եւ Գնիէ գիւղերէն իւրաքանչիւրը հաշուած է 150 տուն բնակիչ, «*գուտ հայ, կը խօսին արաբերէն, առանց բառ մը իսկ հայերէն հասկնալու*»⁴⁰:

Գնիէ գիւղին արեւելեան եւ հիւսիսային կողմերը՝ քանի մը բլուրներէ մէկը կոչուած է Քարուտ եւ ըստ աւանդութեան Գնիէի նախնիք շրջան մը այդտեղ ապրած են, յետոյ տեղափոխուած են բլուրի մը վրայ, որ կը կոչուի Թէլ (Բլուր): Գիւղին՝ Հին Աղբիւրը, զառիթափին վրայ ինկած է, պահուած են 1822, 1832, 1863 թուականներու վերանորոգութիւններուն արձանագրութիւնները: Անոր մասին յաջորդ յիշատակութիւնը կը պատկանի 1852 թուականին, երբ Եագուպիէի Գրիգոր քինյ. Շահպազեան երկու թեկնածուներ Միս տարած է եւ քահանայ ձեռնադրել տուած է՝ Գնիէ եւ Ղնեմիէ գիւղերուն համար: Անոնք եղած են Պետրոս քինյ. Մովսէսեան եւ Յովհաննէս քինյ. Դաւիթեան⁴¹: Հետեւաբար, հոգեւոր հովիւին հովանաւորութեամբ՝ գիւղը շարունակած է հայօրէն գոյատեւել եւ տեղւոյն

³⁹ ՀԱԱ, ֆոնտ թիւ 1421, ցուցակ թիւ 1, գործ թիւ 100, Ղնեմիայ - Արամոյի Ընդհանուր Ժողովրդեան Յուցակագիրը, 20 Յունուար 1921, էջ 1-6:

1. Դարձնալ արխիւային տուեալներով, 1929ին երկու գիւղերուն հայ ազգաբնակչութիւնը հաշուած է, Ղնեմիէ՝ 27 տուն, 122 անձ, Արամո՝ 25 տուն, 97 անձ: Տե՛ս Հ ԱԱ, ֆոնտ թիւ 1421, ցուցակ թիւ 1, գործ թիւ 99:

2. Իսկ «Սիւրիահայ Տարեգիրք»ին մէջ յիշուած է. «Այս երկու գիւղերը գուտ արաբախօս են, մեծ մասամբ արաբախօս են: Երկու գիւղերու հայութիւնը կը հաշուէ մօտ 400 անձ...»: Տե՛ս «Սիւրիահայ Տարեգիրք», Ա. տարի, 1929, **Զուպուրճան Պ.**, «Ալաուիթ Պետութիւն, վարչաձեւը, Սահմանները եւ Ազգաբնակչութիւնը ...», էջ 140:

⁴⁰ **Զուպրճան Յակոբ**, նշուած աշխ., էջ 99:

⁴¹ **Սիւրմէան Արտաւազդ Արք.**, նշուած աշխ., 1: 811-812:

եկեղեցին կոչուած է Ս. Կիպրիանոս: Լատին քարոզչութիւնը Գնիէ մուտք գործած է 1870ական թուականներուն, Մեսրոպ քինյ. Նազլեանի օրօք, գիւղին երկու մեծ ընտանիքներուն՝ Ճօուպի եւ Հաննէի միջեւ ծագած վեճերուն պատճառով: 1878ին, գիւղը ամբողջ լատինացած է եւ Հալէպի ֆրանսական եւ իտալական հիւպատոսներուն ճնշումներով՝ կազմուած է Գնիէի լատին համայնքը, հիմնուած է վանական կեդրոն՝ աղջկանց եւ մանչերու դպրոցներով, արհեստից վարժարանով, առողջապահական կեդրոնով, մինչ լատիններու առաջին եկեղեցին կառուցուած է 1878ին, երկրորդը՝ 1884ին: Այսպիսով գիւղը վերածուած է լատինաց միջնաբերդի մը՝ շրջակայքի հայ եւ քրիստոնէայ գիւղերուն մէջ գործելու մեծ հնարաւորութեամբ⁴²: Այս կացութիւնը վերագրուած է Անտիոքի Վիճակի թեմական երկուութեան, որ ծանր անդրադարձեր ունեցած է շրջանի հայութեան վրայ: Եւ դեռ, Լաթաքիոյ հոգեւոր տեսուչ՝ Թադէոս Վրդ. Աստուածատուրեան Եկաւեանի օրօք (1874-1905 թթ.) և որ Լաթաքիոյ Վիճակէն բացի հովուած է նաեւ Անտիոքի, Սուէտիոյ, Եագուպիէի, Գնիէի հայերը, որոնք պաշտօնապէս մաս կազմած էին Հալէպի Առաջնորդութեան և մեծ թափով ծաւալած են կաթոլիկ եւ բողոքական քարոզչութիւնները շրջանէն ներս:

(Շարունակելի)

⁴² Յաւելեալ մանրամասնութեանց համար տոնս **Չոլաքեան, Յակոբ**, նշուած աշխ., էջ 125-129, 133-135, 138-148: